<<ՎԱՐԴԱՆԱՆՔ>> ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ <<Հայաստանի Հանրապետության աշխարհագրական դիրքի գնահատումը>>

Կտարող՝ Քրիստինե Դանիելյան
Երևանի թիվ 157 հիմնական դպրոց

Ղեկավար՝ Մարթա Ասատրյան

Երևան-2023

Բովանդակություն

Ներածություն.....էջ 3
Գլուխ 1.....էջ 4
Գլուխ 2.....էջ 7
Գլուխ 3.....էջ 9
Գլուխ 4.....էջ 11
Գլուխ 5.....էջ 12
Գլուխ 6.....էջ 14
Գլուխ 7.....էջ 17
Եզրակացություն.....էջ 17
Գրականության ցանկ.....էջ 20
Հավելված.....էջ 21

Ներածություն

Նպատակը. Հետազոտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել, խթանել և զարգացնել Հայաստանի Հանրապետության աշխարհագրական դիրքի մասին գիտելիքները: Համակարգել աշխարհագրական դիրքի դրական և բացասական առանձնահատկությունները, կանխատեսել զագացմանը նպաստող անհրաժեշտ քայլերը, մշակել ռազմավարություն և նախանշել հետագա անելիքները:

Խնդիները. Ցույց տալ տնտեսաաշխարհագրական դիրքի դրական ու բացասական կողմերը: Ցույց տալ հարևան երկրների ազդեցությունը տնտեսաաշխարհագրական դիրքի վրա: Բացահայտել միջազգային կառույցների ազդեցությունը Հայաստանի Հանրապետության տնտեսաաշխարհագրական ու քաղաքաաշխարհագրական դիրքի վրա: Անցկացնել սոցիոլոգիական հարցում, որի միջոցով կարող ենք պարզել, թե բնակչությունը ինչ կարծիք ունի աշխարհագրական դիրքի մասին ընդհանրապես, և Հայաստանի Հանրապետության աշխարհագրական դիրքի մասին՝ մասնավորապես: Սոցիոլոգիական հարցման արդյունքները ներկայացված են հավելվածում (էջ 20-22):

Թեմայի արդիականությունը. Հայաստանի Հանրապետությունը ներկայումս գտնվում է բավականին լարված հարաբերությունների մեջ իր հարևան երկու պետությունների՝ Ադրբեջանի և Թուրքիայի հետ: Աշխարհագրական դիրքի առանձնահատկությունները մեծ դեր են խաղում ռազմական, քաղաքական, տնտեսական կարևոր որոշումներ կայացնելու գործում:

Կառուցվածք. Աշխատանքը կազմված է 7 գլխից և 23 էջից:

Գլուխ 1

Հայաստանի Հանրապետության Սահմանների ձևավորումը
Աշխարհագրական դիրքը

Հայաստանի Հանրապետությունը իր տարածքի մեծությամբ (29743 կմ^2) ու բնակչությամբ (3.02 մլն.մարդ) աշխարհի ավելի քան 200 պետությունների շարքում մտնում է փոքր երկրների խմբի մեջ: Այս ցուցանիշներով զիջում է աշխարհի մոտ 130 պետությունների: Ունի միջազգային ճանաչում: Տարածքը գտնվում է հյուսիսային լայնության 38^0 50’ - 41^{0}18’-ի և արևելյան երկայնության 43^{0}27’-46^{0}37’-ի միջև: Հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք տարածվում է ամենաերկար ձգվածությունը (360 կմ):

Մենք գիտենք, որ պատմական տարբեր ժամանակաշրջաններում Հայաստանի պետական սահմանները ունեցել են տարբեր գծագրություն:

Հայաստանի Հանրապետության քարտեզ

Հայաստանի Հանրապետությունը ներկայիս պետական սահմանները ժառանգություն է ստացել Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմում գտնվող կիսանկախ Հայաստանի Սոցիալիստական Հանրապետությունից (Հայկական ԽՍՀՄ) Հայկական ԽՍՀՄ-ն ստեղծվել է 1920թ., որի տարածքը ներառում էր Հայաստանի առաջին հանրապետության տարածքի մի մասը միայն: Այդ սահմանների բաժանումը տեղի է ունեցել միջազգային բարդ պայմաններում, երբ Ռուսական Կայսրությունից նոր անջատված ու անկախացած անդրկովկասյան երեք հանրապետությունները (Հայաստանը, Վրաստանը և Ադրբեջանը) տարբեր մոտեցումներ ունեին իրենց հետագա սահմանների վերաբերյալ: Յուրաքանչյուր պետություն ձգտում էր հնարավորինս մեծ տարածք ընդգրկել:

Մինչ այդ բաժանումը Ռուսական Կայսրության կազմում Անդրկովկասը (Հարավային Կովկասը) բաժանված էր չորս նահանգների (Երևանի, Թիֆլիսի, Ելիզավետպոլի, Բաքվի) և մեկ մարզի (Կարսի): Այդ բաժանումը հաշվի չէր առնում էթնիկական սահմանները, և յուրաքանչյուր նահանգ միավորում էր տարբեր ազգերով բնակեցված տարածքներ: Այդ խորամանկ քաղաքականությունը դժվարացնում էր պետականություն ստեղծելու համար ազգերի համախմբումը և խոչնդոտում էր ազգային զարթոնքի ու շարժման ծավալմանը:

Անկախությունը առաջինը ստացած Վրաստանը և Ադրբեջանը ձգտում էին, որ պետական սահմաններն անցկացվեն Ռուսական Կայսրության վարչական բաժանման սահմաններով: Անկախացած Վրաստանը ցանկանում էր իր տաիածքի մեջ ընդգրկել Թիֆլիսի նահանգն ամբողջությամբ, որի մեջ մտնում էին հայաբնակ Լոռին ու Ջավախքը, իսկ Ադրբեջանը հավակնում էր ամբողջ Ելիզավետպոլի (Գանձակի) նահանգին, որի կազմում էին հայերով բնակեցված Զանգեզուրն ու Լեռնային Ղարաբաղը:

ՀՀ Տնտեսաաշխարհագրական (ՏԱԴ) և Քաղաքաաշխարհագրական (ՔԱԴ) Դիրքի Հատկանշական Գծերը

- Ներմայրցամաքային դիրքը
- Միջազգային ուղիների խաչմերուկում գտնվելը
- Զարգացած երկրներից և հզոր տնտեսական կենտրոններից հեռու գտնվելը
- Խոշոր պետությունների շահերի բախման ոլորտում գտնվելը
- Համաշխարհային տարբեր քաղաքակրթությունների փոխազդեցության ոլորտում գտնվելը

Այս բոլոր խմորումների արդյուքում 1920-1921 թթ. Հայաստանի ԽՍՀՄ տարածքն ու սահմանները ստացան պաշտոնական ձևակերպում, որոնք ԽՍՀՄ-ի փլուզումից հետո 70 տարի անց նույնությամբ փոխանցվեց ներկայիս երրորդ հանրապետությանը: 1922թ. ստեղծվեց ԽՍՀՄ միասնական պետությունը: Հայաստանը, Վրաստանը ու Ադրբեջանը, մտնելով նրա կազմի մեջ, զրկվեցին պետական անկախությունից և ստացան կիսանկախ քաղաքական կազմավորման կարգավիճակ: Այս երեք հանրապետությունները բաժանող սահմանները դադարեցին պետական սահման լինելուց և դարձան միասնական պետության ներքին վարչական սահմաններ: Այդպիսի սահմանների կարգավիճակը շարունակվեց մինչև ԽՍՀՄ լուծարումը (1991թ.) և նախկին միութենական հանրապետությունների անկախացումը, երբ ստեղծվեց բոլորովին նոր քաղաքաաշխարհագրական իրադրություն:

Հայաստանի Հանրապետության ներկայիս ՔԱԴ-ի և ՏԱԴ-ի առանձնահատկություններից առանձնացնենք մի քանիսը և քննարկենք:

Գլուխ 2

ՀՀ տնտեսաաշխարհագրական և քաղաքաաշխարհագրական դիրքի առանձնահատկությունները

1. Հայաստանի Հանրապետությունը գտնվում է կարևոր միջազգային տրանսպորտային ուղիների (Եվրոպան Կենտրոնական ու Հարավային Ասիային և Ռուսաստանը Մերձավոր Արևելքին կապող) խաչմերուկում: Նրա տարածքով են անցնում Թուրքիան Իրանին, Ադրբեջանին ու Կասպից ծովի ավազանին կապող, ինչպես նաև Հյուսիսային Կովկասը և Սև ծովը Իրանին ու արաբական երկրներին կապող երկաթուղիներն ու ավտոմոբիլային գլխավոր ճանապարհները:

2. Հարավային Կովկասով (և Հայաստանով) է անցնում Արևելյան Ասիան և Կոնտրոնական Ասիան Եվրոպային միացնող ցամաքային ճանապարհը, որը միջնադարի հռչակավոր <<Մետաքսի ճանապարհի>> օրինակով ստացել է <<Մետաքսի նոր ճանապարհ>> անունը: Դրա զարգացմամբ շահագրգռված են ոչ միայն տարածաշրջանի երկրները, այլև ԱՄՆ-ը և Արևմուտքի մյուս խոշոր երկրները:

3. Հայաստանը գտնվում է արևմտյան (եվրոպական), արևելյան (իսլամական) և սլավոնական քաղաքակրթությունների շփման գոտում:

4. Ելք չունի դեպի ծովերն ու օվկիանոսները և, առանց այլ երկրի տարածք հատելու, չի կարող օգտագործել դրանց էժան հաղորդակցության ուղիները և բնական հարստությունները:

5. Հեռու է ընկած աշխարհի բարձր զարգացած երկրներից և հզոր տնտեսական կենտրոններից:

6. Մոտ է գտնվում Պարսից ծոցի և Կասպից ծովի նավթագազաբեր ավազաններին, բնական տարբեր ռեսուրսներով հարուստ Ռուսաստանին և Իրանին:

7. Գտնվում է ԱՄՆ-ի, Եվրամիության երկրների, Ռուսաստանի, Թուրքիայի, Իրանի տնտեսական ու քաղաքական շահերի բախման տարածաշրջանում, որը հայտնի է իր քաղաքական անկայունությամբ:

8. Ռազմավարական դաշնակից համարվող Ռուսաստանի հետ չունի անմիջական սահման:

Հայաստանի Հանրապետության ներկայիս ՏԱԴ-ը բնութագրելիս և գնահատելիս պետք է հաշվի առնել մի շատ կարևոր հանգամանք: Այդ դիրքը բնութագրող տնտեսաաշխարհագրական օբյեկտները, երկաթուղիները, ավտոճանապարհները, նավահանգիստները, նավթամուղներն ու գազամուղները, էլեկտրահաղորդման գծերը, հզոր արտադրական կենտրոնները եղել են նաև մինչև Հայաստանի Հանրապետության անկախացումը: Դրանք ծառայել են Հայաստանին և նրա ՏԱԴ-ը դարձրել նպաստավոր: Անկախացումից հետո էլ այդ կառույցների մեծ մասը շարունակել են իրենց գոյությունը, զարգացել և կառուցվել են նորերը, սակայն ներկա պայմաններում Հայաստանի Հանրապետությունը չի օգտագործում դրանց մեծ մասը, որի պատճառով նրա ՏԱԴ-ը գնահատվում է ոչ նպաստավոր: Պատճառը քաղաքաաշխարհագրական գործոնի գերակա նշանակություն դիրք ձեռք բերելն է:

Ի՞նչ է դա նշանակում: Ո՞րն է քաղաքաաշխարհագրական գործոնի բովանդակությունը: Անցյալ դարի 80-ական թվականների վերջին բռնկված ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտությունը պատճառ դարձավ Հայաստանի Հանրապետության հետ նրա չորս հարևաններից երկուսի (Ադրբեջանի և Թուրքիայի) հարաբերությունների ծայրահեղ լարվածությանը: Այդ երկու թրքախոս երկրները (Թուրքիան և Ադրբեջանը) իրենց հռչակել են որպես թրքալեզու <<եղբայրական ժողովուրդներով>> բնակեցված ռազմավարական դաշնակից երկրներ և հրաժարվում են դիվանագիտական հարաբերություններ

հաստատել Հայաստանի Հանրապետության հետ: Մեր երկրի նկատմամբ վարում են բացահայտ թշնամական քաղաքականություն, չեն բացում պետական սահմանները և ձգտում ավելի խորացնել նրա տնտեսական ու տրանսպորտային շրջափակումը:

Հայաստանի Հանրապետության ՏԱԴ-ի վատթարացմանը նպաստում է նաև վրաց աբխազական հակամարտությունը: Այդ պատճառով չի գործում Վրաստանը Աբխազիային ու Ռուսաստանին կապող երկաթուղին, որից նախկինում օգտվում էր նաև Հայաստանը:

Գլուխ 3

Հայաստանի Հանրապետությունն աշխարհում

Հայաստանը իր որոշակի տեղն ունի ժամանակակից աշխարհում: Արագ փոփոխվող աշխարհում մեր հայրենիքի տեղը, դերը և զագացման հեռանկարները պայմանավորված են պատմական, աշխարհաքաղաքական, տնտեսական, ժողովրդագրական և այլ գործընթացներով: Ինչպես աշխարհի մնացած ժողովուրդները, այնպես էլ մենք՝ հայերս, շարունակում ենք կառուցել մեր տունը, բայց պատմական հայրենիքի մոտ 1/10 մասի վրա: Հայաստանը զարգացնելու ու շենացնելու ուղին ընթանում է նյութական ու ոչ նյութական արժեքներ (ապրանքներ, ծառայություններ) ստեղծելու և մյուս պետությունների հետ դրանք փոխանակելու միջոցով: Այս ճանապարհով է կազմակերպվում հասարակական կյանքը աշխարհի բոլոր երկրներում:

Ինչպես ամեն մի երկրի, այնպես էլ Հայաստանի զարգացման վրա ազդում են և բացասական և դրական մի շարք գործոններ: Դրանք են մեր հայրենիքի.

1. Կտրվածությունը ծովերից
2. Ծրջապատող երկրների զարգացման համեմատաբար ցածր մակարդակը

3. Մեր երկրի տարածքով ձգվող միջազգային տարանցիկ ցամաքային ուղիների առկայությունը
4. Տարածաշրջանում հզոր պետությունների շահերի հակադրությունը (բախումը)

Այս գործոններից մեր երկրի համար նպաստավոր է միջազգային տարանցիկ ցամաքային ուղիների ոլորտում (խաչմերուկում) գտնվելը: Սակայն հայոց պետականության երկրորդ միավորի (Լեռնային Ղարաբաղի) դեմ սահմանակից Թուրքիայի և Ադրբեջանի կողմից անընդհատ կիրառվող ռազմական ու քաղաքական բախումները, տրանսպորտային միջպետական ուղիների շրջափակումը մեզ համար վերոնշյալ գործոնը ժամանակավորապես աննպաստ է դարձնում: Արտաքին աշխարհի հետ Հայաստանի Հանրապետության ներկայիս առևտրային հարաբերությունները զարգանում են սահմանակից Իրանի և Վրաստանի հետ պատմականորեն ձևավորված հարևանային բնականոն հարաբերությունների շնորհիվ:

Հայաստանի Հանրապետություն պետությունը աշխարհում ճանաչված է պաշտոնապես: Նա համաշխարհային հանրության լիիրավ անդամ, միջազգային հարաբերությունների սուբյեկտ, համաշխարհային և տարածաշրջանային զարգացումների լիարժեք մասնակից է, միաժամանակ հայ ժողովրդի բազմադարյան պատմության ժառանգության կրողը և համայն հայության հայրենիքը:

Հայաստանի ու հայ ժողովրդի տեղն ու դերը աշխարհում ուսումնասիրելու համար պետք է կատարենք քանակական և որակական գնահատում:

Սկզբում կատարենք քանակական գնահատում:

Գլուխ 4

Հայաստանի Հանրապետության քանակական գնահատումը

Հայերն աշխարհի հնագույն ժողովուրդներից են, ովքեր սրանից 5000-ից ավել տարի առաջ զբաղեցրել են Հայկական Լեռնաշխարհի (մոտ 400 հազ կմ^2) մեծ մասը: Հայկական պետությունը տարածքի քանակական ամենամեծ ցուցանիշները ունեցել է Տիգրան Բ Արքայից Արքայի օրոք տարածքը գերազանցել է 1մլն կմ^2 (երկրագնդի ցամաքի մակերևույթի 1.5 %) ՝ ձգվելով Կովկասյան լեռներից մինչև Կարմիր ծով և Միջերկրական ծովից մինչև Կասպից ծով:



Պատմական անցյալում հայերի առավելագույն թիվը՝ 7 մլն.մարդ, գրանցվել է XII-XIII դարերում: Դա կազմել է աշխարհի այդ ժամանակվա բնակչության առնվազն 2% -ը: Հետագայում, հատկապես XIV-XIX դարերում, երբ հայերը չեն ունեցել ազգային պետականություն, աշխարհի հայ բնակչության

թիվը կտրուկ փոխվել՝ նվազել է: Հայ ազգաբնակչության թիվը XX դարի սկզբին, մինչև հայոց Մեծ եղեռնը, նվազել է մինչև 4.5 մլն. մարդ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության ներկա տարածքում կազմել է մոտավոր 1 մլն. մարդ:

Բնակչության թվի նվազման, ազգային պետականության կորստի, տարածքի կրճատման հետևանքով, համապատասխանաբար կրճատվել են նաև արտադրողական ուժերի, երկրի ռազմական հզորության, արտաքին առևտրի, տնտեսության ճյուղերի քանակական ցուցանիշները:

Գլուխ 5

Հայաստանի Հանրապետության որակական գնահատումը

Այժմ վերլուծենք աշխարհում Հայաստանի Հանրապետության ու հայերի տեղն ու դերը բնութագրող որոկական ցուցանիշները: Մեծ է ինչպես Հայաստանի, այպես էլ Եվրոպայի, Ասիայի ու Աֆիկայի մի շարք պետությունների ու ժողովուրդների զարգացման գործում հայ ժողովրդի ներդրումը: Մենք պետք է գիտակցենք, բարձր գնահատենք ու աշխատենք ամեն կերպ պահպանել ու բազմապատկել այդ ժառանգությունը:

Հայաստանի Հանրապետության փոքր տարածքում պահպանված հազարավոր հուշարձաններից շուրջ մեկ տասնյակը ՅՈՒՆԵՍԿՈ-ն ճանաչել է որպես համաշխարհային ժառանգության մշակութային արժեքներ: Այդպիսիք են մասնավորապես Երևանն ու Վաղարշապատը (որպես հնագույն քաղաքներ) Էջմիածնի վանքային համալիրը, Զվարթնոց տաճարի ավերակները, Հաղպատի, Սանահինի, Գեղարդի վանքերը, հայկական խաչքարը, դուդուկը, Ազատ գետի վերին հատվածը: Դրանցով են նաև պայմանավորված Հայաստանի, հայ ժողովրդի ու հայկական մշակույթի նկատմամբ ժամանակակից աշխարհում գոյություն ունեցող հետաքրքրությունն ու դրական վերաբերմունքը:

Հայաստանն ու հայեր բոլոր պատմական ժամանակահատվածներում աշխարհի տարբեր երկրների ու ժողովուրդների հետ եղել են մշտական կապի մեջ. կրել են հարևանների ազդեցությունը, բայց իրենք էլ ազդել են նրանց վրա:

Հայերը մեծ ավանդ ունեն հարևան մի շարք ժողովուրդների հասարակական կյանքի ռազմական, արտաքին առևտրի, պետական կառավարման, գիտության, մշակույթի, կրթության, ճարտարապետության և այլ բնագավառներում: Օրինակ՝ անհերքելի է համարվում, որ Արևմտյան ու Կենտրոնական Եվրպայում լայն տարածում ունեցող <<գոթական>> կոչվող ճարտարապետական ոճի հիմքում ընկած է հայկական տաճարաշինական ճատարապետությունը:

Անհերքելի է նաև հայերի դերը Եվրոպայի զարգացած երկրների, ինչպես նաև Թուրքիայի, Իրանի, Ռուսաստանի, Վրաստանի, ԱՄՆ-ի ու արևելյան երկրների, հատկապես Հնդկաստանի հետ առևտրի զարգացման գործում:

Հայտնի են նաև հայերի առնչությունը սլավոնական աշխարհի հետ, նրանց նշանակալի ներդրումը հասարակական կյանքի տարբեր բնագավառներում՝ սկսած սլավոնական գրերի գյուտից, քրիստոնեության ընդունումից ու տարածումից, պետական կառավարման ու ռազմական ոլորտներից և վերջացրած շինարարության, արվեստի, գիտության ու կրթության բնագավառներով: Սլավոնական երկրներում (Ռուսաստան, ՈՒկրաինա, Լեհաստան, Բուլղարիա, Լեհաստան և այլն) և նրանց հարևան Հունգարիայում ու Ռումինիայում հայերը հիմնադրել են կրթական ու մշակութային օջախներ, կառուցել են վանքեր ու եկեղեցիներ, որպես բարձրաստիճան պետական ծառայողներ՝ մասնակցել են տվյալ երկրի հասարակական կյանքին: Դրա հետ զուգահեռ նպաստել են նաև իրենց հայրենիքի՝ Հայաստանի Հանրապետության զարգացմանը:

Խորհրդային տարիներին որպես կիսանկախ պետություն՝ Հայաստանը գտնվում էր ԽՍՀՄ-ի կազմում և նրա պաշտոնական անվանումն էր Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հնրապետություն: Այդ 70 տարիների ընթացքում արագ թափով զարգացան Հայաստանի արտադրողական ուժերը: Արդյունաբերության մի շարք ճյուղերի գծով (գունավոր մետաղաձուլություն, էլեկտրատեխնիկական մեքենաշինություն, քիմիական, թեթև և սննդի արդյունաբերություն) Հայաստանը առաջատար դիրքեր գրավեց ամբողջ ԽՍՀՄ-ում և դրա շնորհիվ էլ մասնակից դարձավ համաշխարհային առևտրին:

Գլուխ 6

Հայաստանի Հանրապետությունը ԽՍՀՄ-ի Փլուզումից հետո

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո անկախացած Հայաստանի Հանրապետությունը պետք է ինքնուրույն նվաճեր իր տեղը համաշխարհային տնտեսության մեջ: Հաղթահարելով սոցիալիստական տնտեսվարման համակարգից շուկայականի անցման հետևանքով առաջացած տնտեսական անկումը, ինչպես նաև 2008թ. սկսած համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետևանքները՝ Հայաստանի Հանրապետությունը ձգտում է տարեցտարի բարելավել իր տնտեսական ցուցանիշները, կատարել արմատական տնտեսական բարեփոխումներ՝ հարմարվելով համաշխարհային շուկայի կանոններին: Դրանով իսկ նա ձգտում է ամրապնդել իր տեղն ու դերը աշխատանքի միջազգային բաժանման համակարգում:

Հայաստանի Հանրապետությունը, լինելով հայ ժողովրդի հարուստ պատմական ժառանգության կրողը, անկախություն նվաճելուց հետո հանդես է գալիս որպես միջազգային իրավունքի սուբյեկտ, ունի միջազգային լայն ճանաչում և վարում է ակտիվ արտաքին քաղաքականություն: Նրա հետ դիվանագիտական հարաբերություններ ունեն աշխարհի շուրջ 150 պետություններ: Դրանցից ավելի քան 20-ը Հայաստանի Հանրապետությունում հիմնել են իրենց դեսպանությունները:

Հայաստանի Հանրապոտությունը մի շարք միջազգային կազմակերպությունների անդամ է: Դրանցից իր նշանակությամբ առավել հայտնի են Միավորված ազգերի կազմակերպությունը (UN), Կրթության, գիտության և մշակույթի հարցերով միավորված ազգերի կազմզկերպությունը (UNESCO), Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպությունը (OSCE) և այլն (տես ստորև):

Միջազգային կազմակերպություններ, որոնց անդամակցում է Հայաստանը

- Միավորված ազգերի կազմակերպություն (UN)
- Կրթության, գիտության և մշակույթի հարցերով միավորված ազգերի կազմակերպություն (UNESCO)
- Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն (OSCE)
- Առողջապահության միջազգային կազմակերպություն (WHO)
- Օթերևութաբանական միջազգային կազմակերպություն (WMO)
- ՄԱԿ-ի Արդյունաբերական միջագային կազմակերպություն (UNIDO)
- Փոստի միջազգային միություն (UPU)
- Հեռակապային միջազգային միություն (ITU)
- Աշխատանքի միջազգային միություն (ILO)
- Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպություն (ICAO)
- Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպություն (WIPO)
- Հյուսիսատլանտյան համագործակցության կազմակերպություն (NACC)
- Քրեական ոստիկանության միջազգային կազմակերպություն (Ինտերպոլ, INTERPOL)
- Հուշարձանների պաշտպանության միջազգային կազմակերպություն (ICOMOS)
- Արբանյակային կապի միջազգային կազմակերպություն (INTELSAT)
- Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ (IBRD)
- Արժույթի միջազգային հիմնադրամ (IMF)
- Պարենի և գյուղատնտեսության հարցերով միավորված ազգերի կազմակերպություն (FAO)
- Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամ (IFAD)
- Սևծովյան տնտեսական համագործակցություն (BSEC)
- Ստանդարտացման միջազգային կազմակերպություն (ISO)
- Միգրացիայի միջազգային կազմակերպություն (IOM)
- Ատոմային էներգետիկայի հարցերով միջազգային կազմակերպություն (IAEA)

- ՄԱԿ-ի՝ Ասիա-խաղաղօվկիանոսյան տնտեսականև սոցիալական հանձնաժողով (ESCAP)

Ունենալով ոչ-բարենպաստ տնտեսաաշխարհագրական դիրք, Հայաստանի անդամկցումը միջազգային կառույցներին կապ է հաստատում Հայաստանի և միջազգային հանրության հետ, ուղի ստեղծելով ՀՀ տնտեսաաշխարհագրական և քաղաքաաշխարհագրական դիրքի բարելավմանը:

Հայաստանի Հանրապետությունն անդամակցում է նաև բազմաթիվ գիտական, մշակութային, կրթական, սպորտային, իրավապահական, լրատվական, տնտեսական հեղինակավոր կազմակերպությունների: Նրա տեղն ու դերը պակաս նշանակալի չեն միջազգային տարածաշրջանային համագործակցության մակարդակում:

Բազմակողմանի համագործակցություն է հաստատված ԽՍՀՄ-ի փլուզումից հետո ձևավերված Անկախ Պետությունների Համագործակցության (ԱՊՀ), Սևծովյան Երկրների Տնտեսական Համագործակցության, Եվրամիության և Եվոպական Խորհրդի, Վերակառուցման ու զարգացման Եվրոպական բանկի և շատ այլ կազմակերպությունների հետ:

Աշխատանքի միջազգային բաժանման գործընթացում անընդհատ մեծանում են Հայաստանի և տարբեր երկրների առևտրի ծավալները: Հայաստանի Հանրապետության ապրանքաշրջանառության կեսից ավելին բաժին է ընկնում Ռուսաստանին, 1/3-ը Եվրամիությանը (ԵՄ) և ավելի քան 10%-ը՝ ԱՄՆ-ին:

Հայաստանի Հանրապետության և ԵՄ-ի միջև 1996թ. կնքվեց <<Գործընկերության և համագործակցության համաձայնագիր>> որն ուժի մեջ մտավ 1999թ-ից: Այդ համաձայնագիրը հնարավորություն տվեց սերտորեն համագործակցել ԵՄ-ի հետ: Տնտեսության անցումային փուլը հաղթահարելու նպատակով՝ այդ համաձայնագրի շրջանակներում Հայաստանը ամենամյա աջակցություն է ստանում: Հայաստանը ընդգրկվել է ԵՄ-ի այնպրսի կարևոր նախաձեռնության մեջ, որը ներառում է ապագայում այդ կառույցին անդամակցելու իրական հնարավորությունը:

Գլուխ 7

Սոցիոլոգիական հարցում

Սոցիոլոգիական հարցման նպատակն է պարզել, թե ինչպիսին են տարբեր սեռի և տարիքային խմբերի քաղաքացիների պատկերացումները տնտեսաաշխարհագրական և քաղաքաաշխարհագրական դիրքի մասին: Ծանոթանալ և վերլուծել բնակչության գիտելիքները Հայաստանի Հանրապետության աշխարհագրական դիրքի մասին: Ըստ հարցման մասնակիցների 12%-ը Հայաստանի Հանրապետության տնտեսաաշարհագրական դիրքը գնահատել է բարենպաստ, 55%-ը ՝ միջին, 33%-ը՝ անբարենպաստ: Ըստ հարցման մասնակիցների բարենպաստ տնտեսաաշխարհագրական դիրք ունեցող երկրներների օրինակներ են Ճապոնիան, ԱՄՆ-ը, Ֆրանսիան, Սինգապուրը, Իսպանիան, Իտալիան, Վրաստանը, ԱՄԷ-ը, Ռուսաստանը և այլն, իսկ անբարենպաստ՝ Հայաստանը, Իսրայելը, Աֆրիկան, Սուդանը, Սիրիան, Մոնղոլիան և այլն:

Ըստ հարցման մասնակիցների տվյալ տարածքի տնտեսության զարգացման վրա մեծ ազդեցություն ունի ջրային ելք դեպի այլ երկրների գործոնը 85%, տարածաշրջանում ընդհանուր տնտեսական իրավիճակի գործոնը՝ 53%, ռեսուրսների, օգտակար հանածոների առկայության գործոնը՝ 63%, տարածաշրջանի քաղաքական իրավիճակի գործոնը՝ 38%, կլիմայական պայմանների գործոնը՝ 30%, երկրի տարածքային մեծության գործոնը՝ 40%:

Եզրակացություն. Ինչպես աշխարհի ցանկացած երկրի, այնպես էլ Հայաստանի Հանրապետության քաղաքաաշխարհագրական դիրքը ժամանակի ընթացքում անընդհատ ենթարկվում է փոփոխությունների: Ըստ կատարված սոցիոլոգիական հարցման արդյունքների, Հայաստանի տարբեր տարիքային խմբերի քաղաքացիների մեծամասնության կարծիքով Հայաստանը ներկայումս գտնվում է միջին տնտեսաաշարհագրական դիրքում: Ըստ հարցման արդյունքների տնտեսության զարգացման հարցում մեծ ազդեցություն ունեն ջրային ելք դեպի այլ երկրներ ունենալու, տարածքի ընդհանուր իրավիճակի և

ռեսուրսների ու օգտակար հանածոների առկայության գործոնները: Սակայն, ոչ նպաստավոր գործոնները կարող են փոխվել նպաստավորի և հակառակը: Ճիշտ դիվանագիտական քաղաքականության շնորհիվ Հայաստանի Հանրապետությունը կարող է իր աշխարհագրական դիրքի բոլոր հնարավոր նպաստավոր գործոնները օգտագործել ի նպաստ երկրի հզորացման: Այս դիվանագիտական հարաբերությունների զարգացումը հնարավոր է արդեն իսկ գործող միջազգային կազմակերպությունների Հայաստանի անդամակցմամբ, ինչը Հայաստանի Հանրապեությանը հնարավորություն է տալիս քննարկելու տարածաշրջանում տեղի ունեցող խնդիրների և դրանց հնարավոր լուծումների մասին: Այսպես՝ հետագայում մեր հարևան երկրների (Թուրքիա և Ադրբեջան) կողմից Հայաստանի Հանրապետության նկատմամբ թշնամական քաղաքականությունից հրաժարվելը, տնտեսական շրջափակման դադարեցումը և ղարաբաղյան հարցի վերջնական խաղաղ լուծումը կարող են հիմնովին փոխել քաղաքական իրադրությունն ամբողջ Հարավային Կովկասում, վերջ դնել ազգամիջյան դարավոր թշնամանքին և հաստատել կայուն խաղաղություն: Դա թույլ կտա ամբողջովին օգտագործել Հայաստանի Հանրապետության և նրա հարևան երկրների տնտեսաաշխարհագրական դիրքի հնարավորությունները, դրանք ծառայեցնել տարածաշրջանում գտնվող բոլոր երկրների բարգավաճմանը:

Գրականության ցանկ

Հասակական աշխարհագրություն 7- հեղինակներ՝ Ռ. ՄԱՐԳԱՐՅԱՆ, Մ. Մանասյան, Գ. Հովհաննիսյան, Ա. Հովսեփյան 2013թ. էջ 152.թեմա- Հայաստանի Հանրապետությունն աշխարհում,էջ 161-Միջազգային կազմակերպություններ, որոնց անդամակցում է Հայաստանը

Աշխարհագրություն/ Հայաստան 9- հեղինակներ Մ. Մանասյան, Ա. Հովսեփյան 2014թ. էջ 27 թեմա -Հայաստանի Հանրապետություն

ՀՀ Քարտեզ՝ http://www.traceca-org.org/am/countries/armenia/map/

Հայաստանը Տիգրան Բ Մեծի օրոք՝ https://www.armmuseum.ru/maps

Սոցիալական հարցման լինկ՝

https://qualtricsxmxgfw5c5bn.qualtrics.com/jfe/form/SV_bKGxPzWH8yXD1LU

Հավելված

ՀՀ Տնտեսաաշխարհագրական Դիրքի Գնահատում / Page 1

Responses: 47

Նշեք Ձեր սեռը: 39



Նշեք Ձեր սեռը: 39

Հարց 1 - Նշեք Ձեր սեռը:	Percentage	Count
Արական	26%	10
Իգական	74%	29
Sum	100%	39

Նշեք Ձեր տարիքային խումբը: 43



Նշեք Ձեր տարիքային խումբը: 43

Հարց 2 - Նշեք Ձեր տարիքային խումբը:	Percentage	Count
14 - 18	42%	18
18 - 25	28%	12
26 – 40	9%	4
40 և բարձր	21%	9
Sum	100%	43

Գնահատեք ՀՀ տնտեսաաշխարհագրական դիրքը որպես տնտեսական զարգացման գործոն: 42



Գնահատեք ՀՀ տնտեսաաշխարհագրական դիրքը որպես տնտեսական զարգացման գործոն: 42

Հարց 3 - Գնահատեք ՀՀ տնտեսաաշխարհագրական դիրքը որպես տնտեսական զարգացման գործոն:	Percentage	Count
Բարենպաստ	12%	5
Միջին	55%	23
Անբարենպաստ	33%	14
Sum	100%	42

Ձեր կարծիքով նշված աշխարհագրական դիրքի գործոններից որո՞նք ազդեցություն ունեն տվյալ տարածքի տնտեսական զարգացման հարցում: 40



Ձեր կարծիքով նշված աշխարհագրական դիրքի գործոններից որո՞նք ազդեցություն ունեն տվյալ տարածքի տնտեսական զարգացման հարցում: 40

Հարց 5 - Ձեր կարծիքով նշված աշխարհագրական դիրքի գործոններից որո՞նք ազդեցություն ունեն տվյալ տարածքի տնտեսական զարգացման հարցում:	Percentage	Count
Ջրային ելք դեպի այլ երկներ	85%	34
Տարածաշրջանի ընդհանուր տնտեսական իրավիճակ	53%	21
Ռեսուրսների/օգտակար հանածոների առկայություն	63%	25
Տարածաշրջանի քաղաքական իրավիճակ	38%	15
Կլիմայական պայմաններ	30%	12
Երկրի տարածքային մեծություն	40%	16
Sum	307%	123

Նշեք Ձեր կարծիքով բարենպաստ և անբարենպաստ տնտեսաաշխարհագրական դիրք ունեցող երկրների մեկական օրինակ: 47

Բարենպաստ	Անբարենպաստ
Ճապոնիա	Մոլդովա
N/A	N/A
Ֆրանսիա	Աֆրիկա
Իսպանիա	Հայաստան
Չինաստան	Մադագասկար
Իսպանիա	Հայաստան
N/A	N/A
Ռուսաստան	Հայաստան
Իտալիա	Հայաստան
Վրաստան	Մոնղոլիա
Ֆրանսիա	N/A
ԱՄՆ	Հայաստան
N/A	N/A
N/A	N/A
Հնդկաստան	Չադ
Ամերիկա	Հայաստան
ԱՄՆ	Ուրուգվայ
Վրաստան	Սիրիա
Ռուսաստան	Աֆրիկա
ԱՄՆ	Ֆրանսիա

Վրաստան	Սիրիա
Ռուսաստան	Աֆրիկա
ԱՄՆ	Ֆրանսիա
N/A	N/A
ԱՄԷ	Բոլիվիա
Իտալիա	Իսրայել

Բարենպաստ	Անբարենպաստ
Ամերիկա	Հնդկաստան
ԱՄՆ	Իսրայել
N/A	N/A
ԱՄՆ	Իսրաել
Սինգապուր	Հայաստան
ԱՄՆ	Աֆրիկա
ԱՄՆ	Սուդան
N/A	N/A
Shvedia	N/A
Իսպանիա	Իսրայել
Azerbaijan	Armenia
N/A	N/A
Իսպանիա	Հարավային Սուդան
Դանիա	Չադ
N/A	N/A
N/A	N/A
Արաբական միացյալ եմիրություններ	Աֆրիկա
N/A	N/A
Սինգապուր	Աֆղանստան
N/A	N/A

N/A	N/A
UAE	Uzbekistan
ԱՄՆ	Հայաստան
Մեքսիկա	Իսրայել
N/A	N/A